

# ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԵՒ ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵԻՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՄԻԱՏԵՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

1994 թուականի օգոստոսի 25-ին, ժամը 18-ին, Վեհաբանում տեղի ունեցավ Եպիսկոպոսաց եւ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի միատեղ ժողով ընդ նախագահութեան Մայր Աթոռի երիցագոյն միաբան Տ. Յուսիկ Արքեպիսկոպոս Սանթուրեանի՝ Լուսարարապետ Մայր Տաճարի: Ժողովը բացուեց Տէրունական աղօթքով, ապա նախագահը ծանուցեց Վեհափառ Հայրապետի մահուան առիթով հրատարակուած ժողովի ընտրուելիք օրակարգը, որը բաղկացած էր մէկ կէտից. Կաթողիկոսական տեղապահի ընտրութիւն: Այնուհետեւ յտնկայս արտասանուեց «Հոգւոց» եւ «Քրիստոս Որդի Աստուծոյ» աղօթքը: Նախագահը առաջարկեց կապմել Դիւան: Խաժակ Սրբապանը, որպէս ատենապետներ առաջարկեց երկու Պատրիարքներին, իսկ Գարեգին Եպիսկոպոս Պէքճեանը երկրորդեց առաջարկը. առաջարկութիւնը քուէարկուեց եւ անցավ միաձայն: Որպէս ատենադպիրներ առաջադրուեցին Յովնան եւ Ասողիկ Սրբապանները Տիրայր Սրբապանի կողմից. առաջարկը երկրորդեց Գրիգորիս Սրբապանը: Առաջարկը քուէարկուեց եւ անցավ միաձայն: Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսեանը յայտարարեց, որ Վեհափառ Հայրապետը թողել է մի Հրաման, ուղղեալ բոլորին, ի պահ տրուած հինգ անձերի մօտ (Տե՛ս Հրամանը ատենագրութեանը կից): Շահէ Սրբապանը ժողովականների ուշադրութիւնը հրաւիրեց Վեհափառ Հայրապետի կողմից վաւերացուած Ներքին Կանոնադրութեան 9-րդ յօդուածի վրայ, որին անդրադարձաւ նաեւ Գիւտ Սրբապանը: Ժողովականները հաստատեցին այն հանգամանքը, որ ժողովը հրաւիրուել է Մայր Աթոռի երիցագոյն միաբանի հեռագիր-հրաւերով, ուղղուած առանց բացառութեան բոլոր Եպիսկոպոսներին եւ ԳՀԽ չորս աշխարհական անդամներին: Ժողովի ատենապետ Տ. Գարեգին Պատրիարքը ճշտեց ներկաների ցանկը եւ ապդարարեց, որ հրաւիրեալներից իրենց մասնակցութիւնն են բերել 39 անձ (35 Եպիսկոպոս-արքեպիսկոպոսներ եւ 4 աշխարհականներ): Պրն Խանջեանը առաջարկեց ընթերցել վախճանեալ Կաթողիկոսի 7 Մայիսի 1993 թունակիր գրութիւնը, որն ընթերցեց Մայր Աթոռի Դիւանապետ Ներսէս Սրբապանը: Ժողովը ի գիտութիւն ընդունեց ընթերցուած գրութիւնը, իսկ ատենապետ Թորգոմ Պատրիարքը լուսաբանութիւններ տուեց գրութեան մասին: Տեղի ունեցան մտքերի

փոխանակումներ ընթերցուած գրութեան շուրջ, անդրադառնալով հիմնականում այն հակասութեան շուրջ, որ կայ ընթերցուած գրութեան 2-րդ կէտի եւ Ներքին Կանոնադրութեան 9-րդ յօդուածի միջեւ: Ժողովի ճնշիչ մեծամասնութիւնը հաստատեց, որ ժողովը գումարուել է համաձայն ներքին Կանոնադրութեան 9-րդ յօդուածի, որը եւ մնում է միակ իրաւական հիմք: Ատենապետ Թորգոմ Պատրիարքը կրկին անդրադառնալով օրակարգի միակ հարցին, ձայն տուեց Գարեգին Պատրիարքին, որն էլ իր հերթին լուսաբանութիւններ տուեց Կաթողիկոսական տեղապահի ընտրութեան ձեւի մասին: Բալուս կարծիքներից յետոյ ժողովը եկաւ ընդհանուր մէկ ելրակացութեան: Այն է՝ առաջին փուլում առաջին երեք առաւել ձայներ ստացողները քուէարկուելու իրաւունք կունենան մասնակցելու երկրորդ փուլին: Երկրորդ փուլում ներկայ քուէարկողների ձայների 50% +1 ձայն ստացող թեկնածուն համարուում է ընտրուած:

Կապուեց քուէախոյ յանձնախումբ հետեւեալ կապով.

Տիրայր, Գեւորգ, Յովնան, Ասողիկ Սրբապաններ եւ Տիար Ռափայէլ Պապայեան:

Տեղի ունեցաւ ընտրութեան առաջին փուլը: Քուէարկութեանը մասնակցեցին 39 ընտրող: Քուէատուփ նետուեցին 39 քուէ: Քուէատուփը բացելուց յետոյ դուրս հանուեցին 39 քուէ: Չայները բաշխուեցին հետեւեալ կերպ՝

- Թորգոմ Պատրիարք Մանուկեան - 16 ձայն
- Գարեգին Արք. Ներսիսեան - 10 ձայն
- Ներսէս Արքեպիսկոպոս Պոպապայեան - 7 ձայն
- Պարգեւ Եպիսկոպոս Մարտիրոսեան - 1 ձայն
- Արսէն Արքեպիսկոպոս Բերբերեան - 1 ձայն:
- Անվաւեր ճանաչուեց 1 քուէ:

Համաձայն որդեգրուած ընտրութեան եղանակի, երկրորդ փուլին քուէարկուելու իրաւունք ստացան Թորգոմ Պատրիարքը, Գարեգին Արքեպիսկոպոսը եւ Ներսէս Արքեպիսկոպոսը: Տեղի ունեցաւ ընտրութեան երկրորդ փուլը: Քուէարկութեանը մասնակցեցին 39 ընտրող: Քուէատուփ նետուեցին 39 քուէ: Քուէատուփը բացելուց յետոյ դուրս հանուեցին 39 քուէ: Չայները բաշխուեցին հետեւեալ կերպ՝

- Թորգոմ Պատրիարք Մանուկեան - 20 ձայն
- Գարեգին Արք. Ներսիսեան - 16 ձայն

Ներսէս Արքեպիսկոպոս Պոպապալեան - 2 ձայն

Անվաներ ճանաչուեց 1 քուէ:

Այսպիսով Կաթողիկոսական տեղապահ ընտրուեց 20 ձայն ստացած Երուսաղէմի Ամենապատիւ Պատրիարք Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանը: Ատենապետ Ամենապատիւ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Գապանձեանը, իր եւ ժողովականների անունից շնորհաւորելով ընտրեալ տեղապահին մաղթեց բեղմնաւոր գործունէութիւն եւ հրաւիրեց իր շնորհակալական խօսքը ասելու: Ընտրեալ Տեղապահը շնորհակալութիւն յայտնելով ժողովին հաւաստիացրեց, որ բարձր գիտակցելով իրեն յանձնուած պարտականութիւնները, նա կանի ամենայն ինչ, յանուն Հայ Առաքելական Եկեղեցւոյ բարգաւաճման եւ ծաղկման:

Կկապմակերպի եւ կիրաւիրի Ազգային-Եկեղեցական ժողով ընտրելու համար Ամենայն Հայոց Կաթողիկոս: Աղօթքով եւ օրհնութեամբ ժողովը յայտարարուեց փակուած:

#### ԱՏԵՆԱԴՊԻՐՆԵՐ՝

Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեան

Տ. Ասողիկ Եպիսկոպոս Արիստակէսեան

26 Օգոստոսի 1994 թ.

Մայր Աթոռ Ս. Էջմիածին